Հովհաննես Թումանյան

Ազդ

Հեռացրեք նրան աստծո սեղանից,
Որ չապականե մեր սրբությունը,
Ազատ պահեցեք անսուրբ բերանից
Վարդանի պաշտած աստծո անունը:

Ավարարությամբ զորացած բազկով
Թո՛ղ նա չընկրե մականը Մեծի,
Եվ շահախնդիր, կաշառված խոսքով
Կանգնի քարոզիչ փրկության գործի:

Թո՛ղ չընկատարեն հաշտ ու պատարագ

Սեղանակապուտ, անարժան ձեռքեր,
Ոչ նվիրական կամարների տակ
Անզգա սրտից վերանան երգեր:

Եվ թող քարկոծվի, ով որ անգիտակ
Մարդկային կյանքի վսեմ խորհրդին,

Կրհամարձակվի Հայոց հարկի տակ
Քարոզել հովվել այս ժողովրդին:

1890

Յատուկ Պոեմ